



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13. 897

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

ՅԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ 1931 Թ. ԳՅՈՒՂԱ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ, ԶՐԱՅԻՆ ՏՈՒՐ-
ՔԻ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎ ԱԳՐՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՏՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.06.2013

13897

1 DEC 2009
26 SEP 2006

313

2-94

պ

Հաստատում եմ
Ֆինտոզկոմի տեղակալ ՊՆՏՐՈՍՅԱՆ
1931 թ. մայիսի 8-ին
քաղ. Յերևան

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՅեՎ ԿԱՆՈՆՆԵՐ 1931 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ, ՋՐԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑ-
ԿԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶ-
ՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8641

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԵՐ

§ 1. 1931 թվի ընդհանուր հաշվառման պարտա-
կանությունները և պատասխանատվությունը դրված և
գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտե-
ների վրա:

§ 2. Նախքան հաշվառում սկսելը, գյուղխորհուրդ-
ները հրավիրում են գյուղի հասարակության ընդհա-
նուր ժողով, ծանոթացնում են գյուղացիներին գյուղ-
հարկի և պետապահովագրության հիմնական սկզբունք-
ների, նրա կիրառման, առանձին տնտեսությունների
և լեկամտի աղբյուրների հաշվառման կարգի ու գյուղ-
հարկի բոլոր արտոնությունների հետ:

Միաժամանակ նրանք պարտավոր են հայտա-
րարելու, վոր հաշվի առնված տվյալների հիման վրա

Գրառույ. № 6523 (բ) Պատվեր № 2962 Տիրաժ 2500

Պետհրատի տպարան, Յերևան



15519 - 57

պետք ե հաշվվի վոչ միայն գյուղհարկը, այլ և պետական ապահովագրման վճարումները և ջրային տուրքը:

Բացի այդ անհրաժեշտ և հայտարարել գյուղացիներին, վոր հաշվի առվող խոզերը յեվ ցագարները գյուղեատկից ազատ են յեվ վոր խոտոր յեղջուրավոր անասուններից գյուղեատկի յեճրակա յեն՝ կովերը յեվ մասակները առաջին ծնից հետո յեվ բուզաները ու սեղաները յեճի օտեկանից բարձր հասակում, իսկ յեզները, զոմեօները, ձիերը, ջորիները, եօերը յեվ ուղիերը միայն չորս օտեկանից բարձր հասակում, մնացածները հարկի յեճրակա յեն, այլ հաշվի են առնվում վիճակագրական ճշգրտակներով կամ պետապահովագրության համար, վոչ յաւաններից յեվ այծերից հարկի յեճրակա յեն միայն ձմեռ անցկացրածները:

Նմանապես գյուղխորհուրդները պարտավոր են հայտարարելու գյուղացիներին, վոր 1930 թվի համեմատությամբ ավելացրած ամբողջ ցանքը, ինչպես և նույն թվի համեմատությամբ ավելացրած ամբողջ մթերավետ անասունները և վոչ յարները ազատվում են գյուղհարկից, իսկ գիտավորյալ կերպով ցանքը կրճատած տնտեսությունների հարկը հաշվվելու յե անցյալ տարվա ցանքի տարածության համեմատ:

Իրա հետ միասին գյուղխորհուրդները պարտավոր են զգուշացնել գյուղացիներին այն պատասխանատվության մասին, վորին յենթակա յե գյուղացին սխալ ցուցմունքներ տալու կամ յեկամտի աղբյուները թաքցնելու համար (քրեական պատասխանատվություն մինչև 6 ամիս ժամանակով ազատազրկում, կամ տուգանում վարչական կարգով: Տուգանքի գումարը կա-

յող և լինել թողցրած յեկամտի աղբյուրի վրա ընկնող հարկի հնգապատիկ գումարից վոչ ավելի):

§ 3. Հաշվառման աշխատանքները պետք և կատարեն գյուղխորհուրդներին կից կազմակերպված, վորպես ոժտնդակ մարմիններ, գյուղհարկային հանձնաժողովները, հետևյալ կազմով՝

1. Նախագահ—գյուղխորհրդի նախագահը.
2. անդամներ—գյուղփոկի նախագահը, գյուղի համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչը, կոլտնտեսության ընտրված ներկայացուցիչը և չքավորական խմբակի ներկայացուցիչը:

§ 4. Ոգտվելով գյուղհարկի առթիվ գումարված հատարակական ժողովից, խրճիթ ընթերցարանում հատուկ գումարված ժողովից և առհասարակ ոգտվելով ամեն հարմար առիթից, գյուղխորհուրդները պետք և զգուշացնել գյուղացիներին, վոր նրանք (գյուղացիները) պարտավոր են ներկայանալ գյուղհարկային հանձնաժողովին հաշվառման համար և ներկայացնել հանձնաժողովին հետևյալ փաստաթղթերը՝

ա) կարմիր բանակայիններին տրվող արտոնություններից ոգտվելու իրավունք ունեցող տնտեսությունները—համապատասխան վկայականներ, վորոնք հաստատում են այդ իրավունքը:

բ) վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամտից գումարները հաստատող փաստաթղթեր, յեթե այդպիսիք մինչև հաշվառումը գյուղխորհրդին չեն ներկայացված:

§ 5. Տնտեսության հողերի, ցանքի, մշակույթների և այգիների տարածությունները, անասունների քանակը, վոչ—գյուղատնտեսական յեկամտների գումարները և շնչերի թիվը պետք և վորոշվեն՝

ա) Տնատիրոջ ցուցմունքների հիման վրա.

բ) Համազուգացիների ցուցմունքների հիման վրա.

գ) Փաստացի ստուգումների հիման վրա:

Տնտեսութան գլխավորի ժամանակավոր բացակայության կամ հիվանդության դեպքում, հաշվառման համար տեղեկություններ պետք է տան տնտեսության չափահաս անդամները: Միայն անչափահաս անդամների ցուցմունքների հիման վրա գյուղ-ցուցակների համապատասխան սյունյակներն լրացնելն արգելվում է:

ԾԱՆՈԹ.—Վորք չերեխաների տնտեսությունների մասին տեղեկություններ պետք է տան նրանց ինձամակալները, իսկ յեթե նրանք բացակայում են, գյուղխորհրդի նախագահը, կամ անդամը:

Վորպես ստուգիչ տվյալներ, պետք է ծառայեն անցյալ տարվա գյուղացուցակները, պետապի ցուցակները, շրջանային գործկոմիտեի հողալին և այլ մարմինների մատյաններում և փաստաթղթերում յեղած տեղեկությունները, ինչպես նաև բոլոր տեսակի կոնտրակտացիայի պայմանագրերը:

ԾԱՆՈԹ.—Առանց տնտեսիչի կամ նրանց փոխարինողների հարցաքննության և յեկամոթ ազդուբների փաստացի հարարերման, միայն վերոհիշյալ ստուգիչ տվյալները հիման վրա, գյուղացուցակներում այս տարվա մասին տեղեկություններ գրողները, յենթակա յեն քրեական պատասխանատվության:

§ 6. Դյուղական ցուցակներում գրվում են ան-

խտիր բոլոր տնտեսությունները (նույն թվում և կոտնտեսությունների անդամները), անկախ նրանից յենթակա են նրանք գյուղհարկի, թե վոչ, հետևյալ հերթականությամբ:

ա) Անհատական տնտեսություններ ունեցող վոչ կոլեկտիվի անդամներ.

բ) Անհատական տնտեսություններ ունեցող կոտնտեսության անդամներ.

գ) Անհատական տնտեսություն չունեցող կոտնտեսության անդամներ—

դ) Վարելանոց չունեցող տնտեսություններ, վորոնք շյուղատնտեսությամբ չեն պարագում (ուսուցիչներ, բժիշկներ, բանվորներ, արհեստավարներ և այլն):

ԾԱՆՈԹ.—Կոլեկտիվ և զանազան կազմամակերպությունները և խորհրդային տնտեսությունները ցուցակագրվում են առանձին:

§ 7. Դյուղացուցակում պետք է զրել հաշվառման բոլոր արդյունքներն, աչն է՝ յուրաքանչյուր տնտեսության յեկամոթի ազդուբները, շնչերը և վոչ գյուղատնտեսական յեկամուտները, այս հրահանգում մատնանշված կարգով:

§ 8. Շրջանային գործկոմիտեները և գյուղխորհուրդները զարնանացանի կամ պանիտն վերջանալուց հետո՝ անմիջապես պետք է սկսեն կազմել գյուղացուցակները այն հաշվով, վոր հաշվառումը վերջանա վոչ ուշ քան հունիսի 15-ը:

§ 9. Տնտեսիչի հարցաքննությունը պետք է կատարվի վորոշ կարգով (տասնորակներով, թաղերով և ալին) տեղական պայմանների համեմատ և նախա-

պես վորոշված տեղերում (գյուղխորհրդում, խրճիթ-
ընթերցարանում և այլն):

Վորպես ընդհանուր կանոն հարցաքննության
համար պետք է հրավիրել 5-10 իրար հետ հարևան
գյուղացիներ և նրանցից յուրաքանչյուրի հարցա-
քննությունը կատարել մյուսների ներկայությամբ:

§ 10. Նախքան գյուղացուցակում տնտեսության
տիրոջ տված տեղեկությունները զրկելը, հարկավոր է
թղթի վրա հաշվել ցանքերի և խոտհարքների տարա-
ծությունը և այլ չեկամտի աղբյուրները, նորից հար-
ցաքննել հարկատուին, թե վորքան ճիշտ են նրա
ցուցմունքները, վորպեսզի գյուղացուցակներում ջնջում-
ներ և ուղղումներ չկատարվեն:

Այն դեպքում, յերբ տնտեսության յեկամտի աղ-
բյուրները պահասում են անցյալ տարվանից, հարցա-
քննողը պետք է ճիշտ կերպով հայտարարի և պարզի
զրա բոլոր պատճառները: Հաշվառում կատարողը, հա-
րևան գյուղացիների միջոցով պետք է ստուգի տեղե-
կություն տվողի ցուցմունքները, տնտեսության ցան-
քերի տարածության, վորելահողի, անասունների մա-
սին և այլն:

Այս ձևով ստուգելուց հետո միայն տեղեկություն-
ները պետք է զրկել գյուղացուցակներում:

§ 11. Յեթի հաշվառում կատարողները գտնեն
տնտեսության տիրոջ պատասխանները կասկածելի և
բացատրություններն անբավարար, պետք է կատա-
րեն յեկամտի աղբյուրների փաստացի ստուգում և
թափաբան չեկամտի աղբյուրները հայտարարելու դեպ-
քում, կազմեն համապատասխան արձանագրություն:
Թաղցնողները գյուղխորհրդի կողմից անմիջապես յեն-

թարկվում են տուգանքի վարչական կարգով, կամ
յենթարկվում են դատական պատասխանատվության:

§ 12. Գյուղհարկային հանձնաժողովների անդամ-
ների մասնակցությունը հաշվառման ժամանակ չպետք
է սահմանափակվի միայն նրանց ներկայությամբ: Ան-
դամներից յուրաքանչյուրը պարտավոր են ամեն մի
տնտեսության տիրոջ պատասխանը յեկամտի աղբյուր-
ների մասին, համեմատել անցյալ տարվա հաշվառման
տվյալները հետ, հարցաքննել և թույլ չտալ, վոր տե-
ղի ունենան սխալ ցուցմունքներ:

§ 13. Հաշվառման ամբողջ աշխատանքներին պետք
է ակտիվ կերպով մասնակցի գյուղի վողջ հասարակա-
նությունը՝ չքավարները, բատրակները, ակտիվ մի-
ջակները, կոլտնտեսականները, կոլտնտեսության վար-
չության ներկայացուցիչները, կուսակցական և կոմ-
յերիսական ակտիվը, գյուղխորհուրդների սեկցիաների
անդամները և լուսավորության գծով աշխատողները:

§ 14. Անասնապահությամբ զբաղվող տնտեսու-
թյունները հաշվի են առնվում այն գյուղում, վորտեղ
նրանք մշտապես բնակվում են: Այն դեպքերում, յերբ
հնարավոր չէ վորոշել նրանց մշտական բնակավայրը,
նրանք հաշվի են առնվում այնտեղ, վորտեղ գտնվում
են հաշվառման պահին:

§ 15. Գյուղից բացակայողների հողաբաժինները,
յեթե մինչև հիմա չեն բաժանվել գյուղացիների միջև
կամ չեն հանձնվել կոլտնտեսությանը, գյուղ-ցուցակ-
ներում պետք է զրկեն առանձին:

§ 16. Գյուղխորհուրդները պարտավոր են տե-
ղական պայմանների համեմատ, շրջափոխումների կող-
մից սահմանված կարգով, ձեռք առնել հատուկ միջոց-

ներ, վորպեսզի տվյալ պլուզից դուրս ապրող անձանց կողմից նույն գյուղում կապալով կամ կիսրար պայմանով վերցրած խաղողի այգիները, պտղատու այգիները, կամ նույն պայմանով կատարած ցանքերը լըրելով հափով հաշվել առնվեն և ավելացվեն այն տնտեսությունների ցանքերին և ուրիշ մշակութային, վորոնք վերցրել են կապալով կամ կիսրար պայմանով ցանք կամ այլ մշակութ ի և ապրում են ուրիշ գյուղերում:

§ 17. Կապալով և կիսրար պայմանով մշակվող հողերը, վորպես ընդհանուր սրենք պետք է գրել հող վերցնողի վրա և ավելացնել տնտեսություն շնչապատկան հողերում կատարված ցանքերին:

ԾԱՆՈԹ.— Կապալով կամ կիսրար տրված վարելահողերը հողատիրոջ շնչապատկան վարելահողից չպետք է հանել, այլ պետք է գրել նրա տնտեսության վրա հողային մատչանի տվյալներին համեմատ: Հողը մշակողի վրա պետք է գրվի միայն ցանքի տարածությունը, վորը հարկվում է կապալով կամ կիսրար պայմանով վերցնող տնտեսության մեջ:

Որինակ՝ Առաքելյանն ունի 5 հեկտար շնչապատկան վարելահող, վորից յերեք հեկտարը ինքն և ցանել, իսկ յերկու հեկտար ավել է կիսրար պայմանով մշակելու Արգար Հարությունյանին:

Հարությունյանը ունի 4 հեկտար շնչապատկան վարելահող, վորից ցանել է 3 հեկտար և վերցրել է Առաքելյանից 2 հեկտար կիսրար ցանելու համար:

Առաքելյանի վրա պետք է գրել նրա 5 հեկտար շնչապատկան վարելահողը ամբողջությամբ: 2 հեկտար

կիսրար պայմանավորված ցանքը նրա վրա չպետք է գրվի, այլ պետք է գրվի ամբողջությամբ Հարությունյանի վրա: Նույն Հարությունյանի շնչապատկան վարելահողը չի ավելացվում, այլ նրա վրա գրվում է միայն իր շնչապատկան 4 հեկտար վարելահողը: Իսկ 2 հեկտար վերցրած կիսրար ցանքը ավելացվում է 3 հեկտար ցանքի վրա և ստացվում է Հարությունյանի ցանքի ընդհանուր տարածությունը:

Այդպիսով այդ յերկու տնտեսության վարելահողի տարածությունը պետք է համապատասխանի հողային մատչանի տվյալներին:

§ 18. Այն դեպքերում, յերբ աշնանային հողաբաժանությունից հետո մինչև հաշվառման սկիզբը, տնտեսությունը գեռ չի սզտվել նոր հողերից, այդ հողերը պետք է գրել այն տնտեսության վրա, վորը փաստորեն սզտվում է գրանցից:

§ 19. Գյուղացուցակում բոլոր տեղեկությունները պիտի գրել թանաքով կամ քիմիական մատիտով:

§ 20 Տեղեկությունները պետք է գրվեն պարզ, մաքուր, առանց ջնջումների և ուղղումների: Ամեն տեսակի ուղղումներ պիտի կատարել միայն սխալ գրվածի վրա գիծ քաշելով և նրա վերևի ուղղումները գրելով:

Այդ մասին գյուղացուցակի վերջում անում են համապատասխան նշանակումներ հետևյալ ձևով — «Ք բոտ կարգի (գրել տնտեսության №-ը) № _____ սյունյակում (գրել սյունյակի №-ը) ջնջված է _____ (գրել ջնջվածը) և գրված է « _____ » (գրել ուղղվածը) համատար: Ստորագրություն:

Այլ կերպ ուղղումները սրգելվում է:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Գյուղացուցակներն աչն սյունակները, վորոնք լրացվում են գյուղհարկային համաձայնությամբ կողմից, սակայն վորոնց վերաբերյալ տվյալներ չկան, պետք է գծել:

§ 21. Հողի տարածությունը գյուղացուցակներում պետք է ցույց տալ անպաշտան հեկտարներով: Տեղական բոլոր տեսակի հողի չափերը պետք է վերածել հեկտարի: Հեկտարից պակաս ցանքի տարածությունը պետք է ցույց տալ տասնորդական կոտորակներով, մինչև 0,05 ճշտությամբ: Մինչև 0,02 հեկտար տարածությունները հաշվի չեն առնվում բոլորովին, իսկ 0,03 հեկտարը կտրացվում է և գյուղացուցակում գրվում է 0,05 հեկտար:

Գյուղատնտեսական հատուկ ճյուղերի տարածությունը (այգիներ, բանջարանոցներ, ծխախոտ և այլն) ցույց է արվում մինչև 0,01 հեկտար ճշտությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Շրջֆինբաժիններն այս հրահանգին պետք է կցեն տեղական ամեն տեսակի հողերի չափերը հեկտարներով վերածած համեմատական տախտակ, մինչև հարյուր յերրորդական մասի ճշտությամբ:

§ 22. Աչն դեպքերում, չերք տեղական պայմանների համեմատ բնակչությունը տեղեկություն չունի վարելահողի տարածության մասին, ապա ցանքի տարածությունը պետք է վորոշել ցանած սերմացուի քանակի համեմատ: Դրա համար անհրաժեշտ է պարզել թե ինչ մշակույթի համար, անտեսությունը վորքան սերմացու յե ցանել, և հաշվի առնելով ձեռքով ցանելու խտության նորման, վորոշվում է ցանքի տարածությունը:

Որինակ՝ յենթադրենք, վոր տնտեսաիրոջ հարցաքննությունից պարզվեց, վոր աշնանը և գարնանը նա ցանել է ընդամենը 6 ցենտներ ցորեն և 5 ցենտներ գարի: Յենթադրենք, վոր տվյալ վայրում ամեն մի հեկտար հողամասում ձեռքով ցանվում է ցորեն— 1,5 ցենտներ, իսկ գարի 1,8 ցենտներ:

Բաժանելով ամբողջ ցանած ցորենը մեկ հեկտարի տնհրաժեշտ սերմացուի նորմայի վրա կստանանք ամեն մի մշակույթի ցանված տարածությունը: Մեր որինսկում բաժանելով 6 ցենտներ սերմացուն մեկ ու կես ցենտներ նորմայի կրա կստանանք 4 հեկտար ցորենի ցանք և 5 ցենտներ գարու սերմացուն բարանելով 1,8 ցենտներ նորմայի վրա կստանանք 2,8 հեկտար գարու ցանք: Ընդամենը ցանք (ցորենի և գարի) 6,8 հեկտար:

Իսկ լիթե ցանքը կատարված է վոշ թե ձեռքով, այլ սերմացան մեքենայով, ապա պետք է պարզել, թե սերմացան մեքենան վոր խտության վրա յե դրված չեղել և այդ խտության մասին մի հեկտարի համար, վորքան սերմացու չե անհրաժեշտ:

Այդ պարզելուց հետո, չերք կպարզվի նաև թե վորքան սերմացու չե ցանված ընդամենը, արդեն հեղտությամբ կարելի չե վորոշել ցանքի տարածությունը: Դրա համար հարկավոր է միայն ամբողջ ցանած սերմացուն բաժանել այդ նորմայի վրա և կստացվի ցանքի ընդհանուր տարածությունը:

§ 23. Բոլոր այն տնտեսությունների վերաբերմամբ, վորոնց արվում են արտոնություններ հարկը հաշվելու ժամանակ առանց նրանց դիմումների՝ «ճանթություն» սյունակում պետք է կատարել համա

պատասխան նշանակումներ: Որինակ՝ «կարմիր բանակալին» և այլն: Այս տեղեկութունները գյուղացուցակում գրելիս պետք է նշանակել հիմնարկութեան անունը, վորը տվել է համապատասխան փաստաթուղթ (փաստաթղթի №-ը և տարեթիվը, յի՞թե անտեսութեանը ներկայացնում է փաստաթուղթ): Փաստաթղթի վրա պետք է նշանակել անտեսութեան №-ը, ըստ գյուղացուցակի:

Այն պեպքերում, յերբ անտեսութեանը փաստաթուղթ չի ներկայացնում կարմիր բանակալինի վերաբերյալ, սակայն գյուղ հարկային հանձնաժողովը համոզված է, վոր ընտանիքի անգամը գտնվում է Բ. Գ. Կ. բանակում, «ճանոթութուն» սյունդակում պետք է նշանակել «կարմիր բանակալինի փաստաթուղթ չկա: Բոլոր ներկայացրած փաստաթղթերը գյուղխորհուրդը պետք է կցի գյուղացուցակին:

§ 24. Հարցաքննութեանը վերջանալուց և գյուղացուցակի համապատասխան սյունդակները լրացնելուց հետո, անմիջապես պետք է գումարել լրացրած սյունդակների ավյալները, չերկու գումարով, այն է կոտնտեսութեան մեջ մտնող անտեսութեանների արվալներն առանձին առանձին տողով—գումարով և մյուս անտեսութեանների ավյալները առանձին տողով—գումարով: Գյուղացուցակի առաջին յերեսի գումարները պետք է փոխանցել չերկրորդ չերեսը, հետո գումարել չերկրորդ չերեսի տեղեկութեանները և ստացած գումարը փոխանցել չերրորդ չերեսը և այլն, մինչև ամբողջ գյուղի ավյալները գումարելը:

§ 25. Գյուղացուցակների վերջում այս տարի հաշվի առնված գումարների ցածի տողում պետք է գրել

անցյալ տարվա ամբողջ գյուղի ավյալները և հաշվել տարբերութեանը:

Տարբերութեանների պատճառների մասին պետք է կազմել կարճ բացատրական արձանագրութեան և կցել ցուցակին:

§ 26. Գյուղացուցակը լրացնելու և գումարելու աշխատանքները վերջանալուց հետո գյուղհարկային հանձնաժողովի անդամները պետք է պարզ ստորագրեն գյուղացուցակների վերջում:

§ 27. գյուղհարկի հաշվառումը, թեև կատարվում է գյուղի ակտիվի մասնակցութեամբ, բայց և այնպես անհրաժեշտ է հաշվառումը ավարտելուց հետո անպայման ամբողջ ցուցակը անտեսութեան առ անտեսութեան չեմթարկել մանրամասն քննութեան գյուղի լաչն ակտիվի մասնակցութեամբ և կասկածների դեպքում կատարել փաստացի ստուգում, վորից հետո միայն հաշվառումը համարվում է ավարտված:

§ 28. Մտուգումներից և անհրաժեշտ պեպքերում ուղղումներ մացնելուց հետո, գյուղխորհուրդը պետք է հաստատի գյուղացուցակը իր ստորագրութեամբ և կնիքով:

§ 29. Գյուղխորհուրդը չերկու օրվա ընթացքում գյուղացուցակը բոլոր փաստաթղթերի հետ միասին պետք է ուղարկի շրջանաչին պորժկոմ:

§ 30. Կոտնտեսութեանների չեկամուտների ագրյուրների հաշվառումը կատարում է շրջանաչին պորժկոմը, կոտնտեսութեանների վարչութեանների ավյալների համաձայն:

2. ԳՅՈՒՂԱՅՈՒՑԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՍՅՈՒՆՅԱԿՆԵՐԸ
ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 31. 1-ին սյունակում պետք է գրվի տնտեսութեան №-ն ըստ կարգի: Յուրաքանչյուր գյուղում տնտեսութեանների համարակալումը պետք է սկսել առաջին №-ից համաձայն ծխամատյանի: Գուղցուցակի վերջին №-ը պետք է հավասար լինի գյուղի տնտեսութեանների ընդհանուր քանակին (նույն թվում և այնպիսի տնտեսութեանների, վորոնք գյուղհարկի լեյթակա յեկամտի աղբուրներ չունեն): Այդ համարակալումը չպետք է փոխվի ամբողջ կամպանիայի ընթացքում:

1-ին սյունակում հայտարարով պետք է գրել նույն տնտեսութեան անցյալ տարվա №-ը ըստ գյուղացուցակի:

Անցյալ տարվա տնտեսութեան №-ն ըստ գյուղացուցակի գրվում է այն նպատակով, վոր հնարավոր լինի ամեն ժամանակ համեմատել անցյալ և այս տարվա տնտեսութեան հաշվառման ավանդները: Յեթե տնտեսութեանը այս տարի նոր է կազմվել կամ տեղափոխվել է ավյալ գյուղը ուրիշ վայրից, անցյալ տարվա ըստ գյուղցուցակի №-ի փոխարեն գրվում է «Ն.Կ.» (նոր կազմված):


§ 32. 2-րդ սյունակում պետք է գրել տնտեսութեան տիրոջ ազգանունը, անունը և հայրանունը լրիվ (առանց կրճատումների):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Տնտեսութեան տեր պետք է հաշվել այն անձնավորութեանը, վորը ցուցակագրված է ծխամատյանում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. Այն դեպքերում, յերբ համապատասխանորեն ձևակերպված վկայականների համաձայն ընտանիքի անդամները համարվում են բաժանված և փաստորեն բաժան տնտեսութեան են վարում, պետք է ցուցակագրվեն առանձին-առանձին, վորպես բաժան տնտեսութեաններ: Հակառակ դեպքում, այսինքն յեթե, չնայած վոր տնտեսութեանը ներկայացնում է համապատասխանորեն ձևակերպված վկայական բաժանման մասին, բայց փաստորեն անբաժան տնտեսութեան է կազմում—պետք է ցուցակագրել վորպես մեկ տնտեսութեան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—3. Փաստորեն բաժանված, սակայն պաշտոնական վկայականներ չունեցող տնտեսութեաններին պետք է գրել առանձին-առանձին, յեթե նրանց բաժանվելը կատարվել է վաղուց (մի քանի տարի առաջ) և յեթե անցյալում նրանք հաշվի յեն անված յիդի վորպես առանձին տնտեսութեաններ:

§ 33. Նույն 2-րդ սյունակում պետք է գրել տեղեկութեաններ այն մասին, յե վոր ազգութեանն է դասում իրեն տնտեսատերը հետևյալ ձևով՝ «հայ» «թուրք», «ուս», «յեզդի» և այլն: Այդ տեղեկութեանները պետք է գրել տնտեսատիրոջ հայտարարութեան հիման վրա, և նրա ցուցումները գրելու ժամանակ ձևափոխել չի կարելի: Սակայն անհրաժեշտ է հետևել վոր հարցաքննութեան ժամանակ շփոթութեաններ տեղի չունենան, չխառնվի ազգութեանը դավանանքի հետ և տեղի չունենան այնպիսի դեպքեր, յերբ «հայ» գրելու փոխարեն, գրվում է «լուսավորչական», «կա-



15519 - 57

Թռիկ», կամ թուրք գրելու փոխարին գրվում և «մահ-մեղադան» և այլն:

§ 34. Յեթի տնտեսությունը պուղատնտեսական արտելի, միատեղ հող մշակելու ընկերություն կամ պարզ միավորություն անդամ է, ապա գյուղացուցակի նույն լիքերորդ սյունյակում, ազգանուն, անունը, հայրանունը և ազգութունը գրելուց հետո, պետք է գրել նաև այն կողմնտեսության անունը, վորի անգամն է տնտեսությունը: Բացի այդ, յեթի ընկերություն քանող անասունները և ինվինտարը լրիվ հանրայնացրված է, ապա այդ մասին, ընկերություն անունը գրելուց հետո, պետք է գրել նաև «հանրայնացված»:

§ 35. 3-րդ սյունյակում պետք է գրել տնտեսության մեջ յեղած ամբողջ վարելահողի տարածությունը:

Վարելահողի մեջ պետք է հաշվել՝

ա) Դաշտային և ագարակային ամբողջ ցանքի տարածությունը, նույն թվում և այն ցանքերը, վորոնք ազատվում են հարկից, արտոնությունների կարգով (շաքարի ճակնդեղ և այլն) կամ հարկվում են չեկամտի հատուկ նորմաներով (քանջարանոցներ, կարտոֆիլ, բամբակ, ծխախոտ և այլն):

բ) Հարոսները, խոպտնացած և հանգստի թողած հողամասերը:

գ) Չցանված այլ վարելահողերը և ագարակային հողամասերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարելահողի մեջ չպետք է հաշվել հնձվող հողերը (խոտհարքները), խաղողի և պուղատնտեսայիններն ու թթևնու անկարանները, ինչպես նաև այն հողամասերը, վորոնք բռնված են շենքերով:

§ 36. 4-րդ սյունյակում պետք է գրել մինչև 1931 թ. գարունը, աղետից տուժած աշնան ցանքի ամբողջ տարածությունը:

§ 37. 5-րդ սյունյակում պետք է գրել աղետից տուժած աշնանացանի տարածության այն մասը, վորը կրկին ցանված է գարնանը: Այդ կրկին ցանված տարածությունը ցույց է տրվում հետևյալ սյունյակներում համապատասխան գարնանացան մշակույթների հետ:

§ 38. 6—24 սյունյակներում պետք է գրել այդ սյունյակների վերնագրերում մասնանշված 1931 թ. (1930 թ. աշնան և 1931 թ. գարնան) ցանքերի տարածությունները, ըստ մշակույթների տեսակների, այն է՝ 6-րդ սյունյակում պետք է գրել աշնան ցորենի ցանքի տարածությունը, 7-րդ սյունյակում գարնան ցորենի ցանքի տարածությունը, 8-րդ սյունյակում աշնան գարու ցանքի տարածությունը, 9-րդում՝ գարնան գարու ցանքի տարածությունը, 10-րդում՝ չեզիպտացորենի, 11-րդում՝ սորուկի (կողայի) և բիժիկի, 12-րդում՝ դեղաբույսերի և լյուֆայի, 13-ում՝ կանեփի, 14-րդում՝ կավահատի, 15-ում՝ քունջութի, 16-րդում՝ սոյայի, 17-րդում՝ ընդեղենի (լոբի, սիսեռ, վոսպ և այլն), 18-րդում՝ գենագերչակի, 19-րդում՝ արախիսի, 20-րդում՝ կենաֆի, 21-րդում՝ քնդդրի, բամբի, կաուչուկարի թփերի, դաֆրանի և գնդածաղիկի, 22-րդում՝ կերի արմատաբույսերի և 23-րդում՝ արհեստական խոտաբույսերի (չոնջա, կորընգան) ցանքերի տարածությունները: 24-րդ սյունյակում պետք է գրել՝

1931 թ. ընդհանուր ցանքի տարածության մեջ

յիզած՝ միայն ջրովի տարածութիւնը: Այդ սլունյակը լրացնելիս պետք է նկատի ունենալ, Վոր 6 ից մինչև 24-րդ սլունյակներում զբվող ցանքի տարածութիւններին միջ մանում են ինչպես ջրովի, նույնպես և անջրիլ ցանքերը: Ուրեմն 24-րդ սլունյակում պետք է ցույց տալ այդ ցանքերի (6-ից մինչև 23-րդ սլունյակը ներառալ) միայն ջրովի տարածութիւնը, վորն աչդպիսով կրկնվում է 2-րդ անգամ 24-րդ սլունյակում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ջրովի ցանքեր են համարվում այն տարածութիւնները, վորոնք ջրվում են վորող ցանցից:

§ 39. 25-րդ սլունյակում պետք է գրել կարտոֆիլի ցանքի ամբողջ տարածութիւնը. (զաշում և ազարահում), իսկ 26-րդ սլունյակում՝ կարտոֆիլի ցանքի ջրովի տարածութիւնը: 27-րդ սլունյակում պետք է գրել բամբակի, 28-րդում՝ չալթուկի, 29-րդում՝ ծխախոտի և դուլասարի, 30-րդում՝ ըստաններին, (ձմերուկ և սոխ) և 31-րդում՝ բանջարեղենի տարածութիւնը (վարունգ, կարմիր և սև բաղրիջան, կաղամբ և մլուսները):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.՝ Ղուլասարի ցանքերը ծխախոտի սլունյակում (29-րդ սլունյակ) պետք է հաշվի առնել և գրել հայտարարով:

§ 40. 32-րդ սլունյակում պիտի գրել այն բոլոր մշակույթները, վորոնք նախորդ սլունյակում հաշվի են առնված:

§ 41. 33-րդ սլունյակում պետք է գրել անտեսութեան 1931 թ. հաշվառված ցանքի ամբողջ տարածութիւնը: Այսինքն 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14,

15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31 և 32 սլունյակների գումարը:

§ 42. 34-րդ սլունյակում պետք է գրել 1930 թ. ամբողջ ցանքի տարածութիւնը, վորը մեքենայութեան արտադրվում է նույն թվի պուղցուցակի 37-րդ սլունյակից:

§ 43. 35-րդ սլունյակում պետք է գրել գյուղհարկից ազատվող ցանքերի ավելացած ամբողջ տարածութիւնը:

Այդ սլունյակը պետք է լրացնել 33-րդ սլունյակի ավելաներից հանելով 34-րդ սլունյակում յիշած ավելաները և անացորդը գրելով 35-րդ սլունյակում:

Յեթի տնտեսութիւնը, առանց հարգելի պատճառների այս տարի համեմատած անցյալ (1930 թ.) տարվա ցանքի հետ անհարգելի պատճառներով (ղիտափորչալ) պակասեցրել է իր ցանքի տարածութիւնը, ապա գյուղհարկային հանձնաժողովը 35-րդ սլունյակում պետք է նշանակի «անհարգ» (անհարգելի), իսկ հարգելի պատճառներում «հարգ» (հարգելի):

Անհարգելի պատճառներով ցանքի տարածութիւնը պակասեցրած տնտեսութիւնը, հարկվում է 1930 թ. ցանքի տարածութեան համեմատ, զրա համար 36-րդ սլունյակում պետք է գրել տնտեսութեան 1930 թ. ամբողջ ցանքի տարածութիւնը, արտադրելով այդ այս տարվա պուղցուցակի 34-րդ սլունյակից:

44. 37, 38, 39, 40 և 41-րդ սլունյակները լրացվում են ցանքի ավելացած տարածութիւնը հարկից ազատելու վերաբերյալ արտոնութիւնը կիրառելուց հետո: Այսինքն՝ 41-րդ սլունյակում պետք է

գրել այն գումարը, վոր կմնա 37, 38, 39 և 40-րդ սյունակների տվյալները գումարելուց և 36-րդ սյունակի տվյալներից հանելուց հետո:

Այսպիսով 37, 38, 39, 40 և 41-րդ սյունակների տվյալների գումարը պետք է հավասար լինի 36-րդ սյունակի տվյալների գումարին:

Որինակ՝ տնտեսություն մեջ 1931 թ. հաշվի չի առնրված ընդամենը 10 հեկտար ցանք, վորից բաժրակ 1 հեկտար, չալթուկ 2 հեկտար, բանջարեղեն 1 հեկտար և 6 հեկտար աշնանացան ցորեն: 1930 թ. նույն տնտեսությունը ունեցել է 7 հեկտար ցանք: Այսպիսով տնտեսություն ավելացած ցանքի տարածությունը կազմում է 3 հեկտար: Գուղցուցակի 35 սյունակում պետք է գրվի 3 հեկտար և տնտեսության հարկը պետք է հաշվի միայն 7 հեկտար ցանքի համեմատ: Գուղցուցակում այդ 7 հեկտար հարկվող տարածությունը փոխանցվում է 36-րդ սյունակը: Այսպիսով այս տարվա 3 հեկտար ավելացած ցանքը միանգամայն ազատվում է հարկից: Իրա հետ միասին ավելացած ցանքի տարածությունը առաջին չեքերին պետք է դուրս գալ բարձր նորմայով հարկվող մշակույթից, յեթե ավել մշակույթը ավելացել է: Յենթադրենք, վոր նույն տնտեսությունը 1931 թ., համեմատած առցյալ տարվա հետ, ունի 1 հեկտար ավելացած չալթուկի ցանք և 0,5 հեկտար բանջարանոցի ցանք: Այս դեպքում հաշվի առած չալթուկի տարածությունից (28 սյունակ) պետք է հանել 1 հեկտար և մնացած չալթուկի ցանքը գրել 37-րդ սյունակում: Նույնը պիտի կատարվի և բանջարանոցի վերաբերյալ: Այսինքն հաշվի առված բանջարանոցի տարածությունը

նից (31-րդ սյունակ) պետք է հանել 0,5 հեկտար և մնացած բանջարանոցի ցանքը գրել 40-րդ սյունակում: Ավելացած ցանքի մնացած 1,5 հեկտար տարածությունը պետք է դուրս գալ դաշտամշակույթյան (ցանքի) նորմայով հարկվող ցանքի տարածությունից և մնացորդը գրել 41-րդ սյունակում: Այսինքն 36-րդ սյունակի տվյալներից պետք է հանել 37, 38, 39 և 40-րդ սյունակների գումարները: Տվյալ դեպքում մնացորդը հավասար է 5,5 հեկտարի, վորը և պետք է գրել 41-րդ սյունակում: Յեթե բարձր նորմայով հարկվող մշակույթների ցանքի մեջ առցյալ տարվա համեմատությամբ ավելացած տարածություն չկա, ապա ամբողջ ավելացած ցանքը պետք է դուրս գալ ցանքի նորմայով հարկվող տարածությունից:

§ 45. 42, 44 և 43-րդ սյունակներում պետք է գրել պողարեր այգիները, հետևյալ կարգով՝

ա) 42-րդ սյունակում պետք է գրել անպողարեր նոր անկարանները:

բ) 43-րդ սյունակում պետք է գրել միայն պղտղարեր տարածությունը:

գ) 44-րդ սյունակում պետք է գրել պողարեր այգիների միայն ջրովի տարածությունը:

§ 46. 45, 46 և 47-րդ սյունակներում պետք է գրել այդ սյունակների վերնագրերի համեմատ խողովի այգիները նույն կարգով, վորը սահմանված է պողարեր այգիների համար:

§ 47. 48 և 49-րդ սյունակներում պետք է գրել թթանոցները (թթնուռ անկարանները) հետևյալ կարգով՝

ա) 48-րդ սյունակում պետք է գրել այն թթանոցները, վորոնք բերք են տալիս

բ) 49-րդ սյունյակում պետք է գրել այն թիվանոցները, վորոնք ոգտագործվում են վորպես շերամի կեր:

Թիվանոցները հաշվի առնելու հետ միաժամանակ անհրաժեշտ է գուցուցուցակի ծանոթության սյունյակում համապատասխանորեն նշանակել տեղեկաւթյուններ այն մասին, թե ինչի համար է ոգտագործում տնտեսութեանն իր թիվանոցը: Յեթե ոգտագործում է միայն իր սեփական տնտեսութեան մեջ պահվող շերամի կերի համար, պետք է նշանակել «տնտեսութեան շերամ»: չեթե ոգտագործում է ուրիշ տնտեսութեաններին, վորպես շերամի կեր վաճառելու համար, պետք է գրել «վաճառք ուրիշին», չեթե սգտագործում է ողի թորելու համար, պետք է գրել «ողի չե թորում»: Այս տեղեկութեանները անհրաժեշտ են վորպեսզի համապատասխանորեն հարկվի կամ ազատվի հարկումից տնտեսութեան թիվանոցը:

§ 48. 50 և 51-րդ սյունյակները մեզ մոտ չեն լրացվում:

§ 49. 52 և 53-րդ սյունյակները պետք է ոգտագործվեն հարոսների հաշվառման համար:

Հարոսները հաշվի առնելու ժամանակ պետք է դեկավարվել հետևյալով՝ տնտեսութեան շնչապատկան վարելահողի այն տարածութեանը, վորը ոգտագործվում է նրա կողմից 2 տարի շարունակ, վորպես խոտհարք (վար ու ցանք չի անում), պետք է հաշվել հարկի չենթակա հարոս և գրել ամբողջ տարածութեանը 52-րդ սյունյակում: Հարոսները հարկվում են խոտհարքի համար սահմանված նորմայով: 53-րդ սյունյակում պետք է գրել հարոսների միայն ջրովի տարածու-

թյունը, վորն ամբողջ հարոսի տարածութեան հետ պետք է նշանակված լինի 52-րդ սյունյակում: Վորովհետև հարոսները հողային մատչաններում նշանակված են լինում տնտեսութեան վրա, վորպես վարելահող, ապա ուրեմն կարիք չկա այդ տարածութեանը, վարելահողի տարածութեանից հանելու կամ կրկին անգամ ավելացնելու նրա վրա, այլ միայն մի անգամ ընդհանուր վարելահողի մեջ հաշվելուց հետո այլևս չի ավելացվում վարելահողին:

§ 50. 54 և 55-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութեան մեջ յեղած բոլոր փեթակների քանակը այդ սյունյակների վերնագրերի համապատասխան:

§ 51. 56 և 57-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութեան խոտհարքների տարածութեանները հետևյալ կարգով՝

ա) 56-րդ սյունյակում պետք է գրել տնտեսութեանը հատկացված ջրովի և անջրդի բոլոր տեսակի խոտհարքները, բացի ճանճային խոտհարքներից:

բ) 57-րդ սյունյակում պետք է գրել 56-րդ սյունյակում նշանակված ընդհանուր խոտհարքի տարածութեանից՝ միայն ջրովի տարածութեանը:

§ 52. 58 և 59-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն դժվում:

§ 53. Վորովհետև անասունների հաշվառումը մեկ անգամ արդեն կատարվել է, անասունների ընդհանուր հաշվառում այլ ևս չի կատարվելու: Ստեղծն կատար ունենալով, վոր ինչպես խոշոր յեղջուրավոր, նույնպես և մանր յեղջուրավոր անասունների այս տարվա ծնածները լրիվ չի հաշվի առված (անասունների հաշվառման ժամանակ ծինը չեր վերջացել), ապա տնհրա-

ժեշտ է, ընդհանուր հաշվառման ժամանակ լրիվ չափով հաշվի առնել այս տարվա մինչև 1 տարեկան հասակ ունեցող բոլոր խոշոր անասունների մատղաշները և մանր յեղջուրավոր անասունների այս տարվա ուլերն ու գառները: Այդ լրացուցիչ հաշվառման արդյունքները պետք է նշանակվեն գյուղացուցակում հատկացված 60, 70, 80, 85, 88, 92 և 93-րդ սյունյակներում:

§ 54. 61-ից մինչև 97-րդ սյունյակները պետք է լրացվեն մինչև հաշվառման սկիզբը, անասունների հաշվառման և անցյալ տարվա գյուղացուցակների տրվյալների հիման վրա: Այդ սյունյակները լրացնելու հարգի մասին տես Ֆինժողկոմատի հարկման Սեկտորի այս թվի մայիսի 11-ի № խ. 8 V 11 շրջաբերականը ուղարկված բոլոր շրջֆինբաժիններին:

§ 55. 98, 99 և 100-րդ սյունյակներում պետք է գրել տնտեսութայն խողերը հետևյալ կարգով՝

98-րդ սյունյակում պետք է գրել վորձ խողերը 9 ամսականից վեր հասակում:

99-րդ սյունյակում պետք է գրել ծնի խողերը 9 ամսականից վեր հասակում և

100-րդ սյունյակում պետք է գրել փոքրահասակ խողերը 4-ից մինչև 9 ամսական հասակում:

Այդ տեղեկությունները ստանալու և գյուղացուցակում գրելու համար անհրաժեշտ է, ընդհանուր հաշվառման ժամանակ կրկին անգամ հաշվի առնել տնտեսութայն խողերը մատնանշված կարգով:

§ 56. 101 և 102-րդ սյունյակները հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

§ 57. 103-րդ սյունյակում պետք է գրել մաս-

նավոր շուկայում գյուղատնտեսական մթերքները լարձր դներով վաճառելուց ստացած չեկամուտները, այն տնտեսությունների վերաբերյալ, վորոնք կոտորակտացիայի պայմանագրերը և պլանային մթերումները առաջադրությունները չեն կատարել, կոտորակտացիայի պայմանագրեր չեն կնքել կամ պլանային մթերումների առաջադրություններ չեն ստացել:

§ 58. Գյուղատնտեսական մթերքները մասնավոր շուկայում վաճառելուց ստացած չեկամուտները պետք է հաշվի առնել 1930 թ. բերքահավաքից սկսած մինչև 1931 թ. հաշվառման մասնադր:

Հաշվառման յեթեմակ չեն այն չեկամուտները, վոր ստացել են տնտեսություններն այնպիսի մթերքների վաճառելուց, վորոնց նկատմամբ նրանք ունեցել են և լրիվ չափով կատարել են 1930—31 թ. մթերման կամ պլանային ընթացքում պլանային առաջադրությունները (կոտորակտացիայի կարգով, պլանային առաջադրութայն կամ կամավոր պարտականութայն կարգով):

Այն չեկամուտները, վոր ստացել են տնտեսությունները այնպիսի մթերքներ վաճառելուց, վորոնց նկատմամբ նրանք պարտականություններ չեն ունեցել, պետք է հաշվի առվեն բոլոր տնտեսություններում, նույն թվում և այն տնտեսություններում, վորոնք առհասարակ պարտավորություններ չեն ունեցել ԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ. — Կարտտեսականների տնտեսություններում այն չեկամուտները, վոր ստացվել են գյուղատնտեսական մթերքները մասնավոր շուկայում վաճառելուց, հաշվառման չենթեմակ չեն և չեն հարկվում:

§ 59. Մասնավոր շուկայում գյուղատնտեսական մթերքները բարձր գներով վաճառելուց ստացած չեկամուտները յենթակա յեն հարկի, լեթե զբանց դուժարները 75 ա. ավելի յե: 75 ա. պակաս յեկամուտը հարկի յենթակա չե: Այդ յեկամուտները վերոշելու ժամանակ պետք և հաշվի առնել վոչ թե վաճառված մթերքի ամբողջ արժեքը, այլ այն տարբերությունը, վոր ստացվել և պլանային—մթերման ու մասնավոր շուկայի գների մեջ գոյություն ունեցող տարբերություն հետևանքով:

Որինակ 1.—1930 թ. գարնանը անտեսությունը կոնտրակտացիայի պայմանագրի համաձայն, պարտավորվել և հանձնելու բամբակի ամբողջ բերքը: Բացի դրանից նույն թվի աշնանը նա ստացել և առաջագրություն 80 փ. ցորեն հանձնելու վերաբերյալ: Այդ չեղու պարտականությունները անտեսությունը կատարել և լիովին: Այդ նույն անտեսությունը 1930 թ. բերքահավաքից հետո մինչև 1931 թ. հաշվառումը մասնավոր շուկայում վաճառել և 30 փ. ցորեն և պլանային մթերումների համար սահմանված ու մասնավոր շուկայում գոյություն ունեցող գների տարբերության հետևանքով այդ վաճառքից ստացել և 250 ա. տարբերություն: Բացի այդ նա վաճառել և 10 հավ և ստանել և 60 ա. տարբերություն:

Վորովհետև ցորենի վերաբերյալ այս անտեսությունը կատարել և պլանային առաջագրությունը, և ապա ցորենը վաճառել, ուրեմն այդ 250 ա. յեկամուտը չպետք և հաշվի առվի:

Ինչ վերաբերվում և մյուս յեկամուտներին (60 ա. հավեր վաճառելուց) այդպիսիք նույնպես հաշվի չեն առվում, վորովհետև 65 սուբյուց պակաս են:

Հետևապես ավյալ անտեսության մասնավոր շուկայում գյուղատնտեսական մթերքները բարձր գներով վաճառելուց ստացած յեկամուտները հարկի յենթակա չեն:

Որինակ. 2.—Տնտեսությունը ստացել և կալուն առաջագրություն 200 փ. խաղող և 20 փ. ցորեն հանձնելու վերաբերյալ: Այդ չեղու առաջագրությունները լրիվ կատարելուց հետո, նա վաճառել և մասնավոր շուկայում 10 դույլ գինի, 2 տակառ կնճիռ և 1 կով: Վորովհետև անտեսությունը մասնավոր շուկայում վաճառած այդ մթերքների նկատմամբ վոչ մի պարտականություն չի ունեցել, ապա այդ մթերքներից ստացած յեկամուտի տարբերությունը հաշվի յե առվում և հարկվում:

Այդ յեկամուտի գումարը վերոշվում և հետևյալ կարգով՝

Նախ պարզվում և, թե պլանային մթերման ինչ գներ են սահմանված յեղել և ինչ գներով և վաճառել մասնավոր շուկայում անտեսությունն իր մթերքներն ու ապա վորոշվում և այդ գների տարբերության յեկամուտը:

Յերթադրենք վոր սահմանված և յեղել պլանային մթերման հետևյալ գներ՝

Գինու զուլը	3 ա.	ուրեմն 20 դույլը —	60 ա.	
կնճիռի տակառը	10 ա.	ուրեմն 2 տակ. —	20 ա.	
կովի մեկը	50 ա.	ուրեմն 1 կովը —	50 ա.	
			Ընդամենը	130 ա.

Ասենք թե անտեսությունը վաճառել և իր մթերքները հետևյալ գներով՝

Գինու դուլը . 5 ու. ուրեմն 20 դուլը—100 ու.
Կնճիթի տակաւը 50 ու. ուրեմն 2 տակ. — 100 ու.
Կովի մեկը . 250 ու. ուրեմն 1 կովը — 250 ու.

Ընդամենը . 450 ու.

Այդպիսով մասնավոր շուկայում վաճառելուց
450. ընդհանուր լիկամտից հանելով 130 ու. պլանային
մթերման գնելով հաշված ամբողջ արժեքը կստանանք
320 ու. գների տարբերութեան լիկամուտ:

Ուրեմն տվյալ տնտեսութեան վրա հաշվի յի
առնվում այդ 320. ու. տարբերութեան լիկամուտը:

Որինակ 3.— Տնտեսութեանը կոնարակտացիայի
պայմանագիր չի կնքել, կալուէն առաջադրութեանն էր
չի ստացել, կամավոր պարտականութեանն էր չի վեր-
ցրել և իր գլուղատնտեսական մթերքներից մասնավոր
շուկայում բարձր գներով վաճառել է՝ 20 փ. ցորեն և
գարի, վորի տարբերութեան լիկամուտը կազմում է
250 ու.

3 վոլյար, վորի տարբերութեան լիկամուտը կազ-
մում է 100 ու.

1 փ. պանիր, վորի տարբերութեան լիկամուտը
կազմում է 40 ու.

10 հավ, վորի տարբերութեան լիկամուտը կազ-
մում է 60 ու.

200 հատ ձու, վորի տարբերութեան լիկամուտը
կազմում է 40 ու.

Այդպիսով տնտեսութեանը ստացել է 490 ու.
տարբերութեան լիկամուտ, վորը ամբողջութեամբ հաշ-
վի յի առնվում տնտեսութեան վրա, վորովհետև, յերբ
ստուգում ենք տարբերութեան լիկամուտ, հակադրվում է,
վոր պլանային—մթերման գներով հաշված արժեքը

արդեն հանված է ընդամենն ստացած լիկամտից և
մնացել է միայն գների տարբերութեան լիկամուտը:

§ 60. Գլուղհարկային հանձնադրողները ամեն
մի տնտեսութեան վերաբերյալ ընդհանուր հաշվառումը,
նույն թվում նաև վոչ-գլուղատնտեսական զբաղմունք-
ներից ստացած լիկամուտների հաշվառումը վերջաց-
նելուց հետո, անմիջապես հարցաքննում են ամեն մի
տնտեսութեան պլավորին և պարզում մասնավոր շու-
կայում գլուղատնտեսական մթերքները բարձր գներով
վաճառելուց լիկամուտներ ստացել և թի վոչ:

§ 61. Յեթե պարզվում է, վոր այս կամ այն տըն-
տեսութեանները այդպիսի լիկամուտներ ստացել են,
գլուղհարկային հանձնաժողովները անմիջապես պար-
զում են այդ լիկամուտների գումարը:

Այդ նպատակով, ինչպես և վոչ-գլուղատնտես-
ական զբաղմունքների հաշվառման ժամանակ, հանձնա-
ժողովները հարցաքննում են և իրեն հարկատուին և
համադրուղացիներին.

Միաժամանակ մասնավոր շուկայում գլուղատըն-
տեսական մթերքները բարձր գներով վաճառվելուց
ստացած լիկամուտները մանրամասն հաշվելու և ար-
ձանագրելու համար, գլուղհարկային հանձնաժողովները
կազմում և լրացնում են զրա համար հատուկ սահ-
մանված ձև «Բ» ցուցակը:

Այդ ցուցակում սակայն պետք է գրել միայն
պլավոր մթերքների անունները որինակ հաց (ցորեն-
նը, գարին, ալյուրը, թխած հացը միասին), խոտ ու
ղարման (միասին), կաթնամթերքներ, մսեղին, անա-
սուններ, լսողող (գինին և կնճիթը միասին) և բան-
ջարեղին:

Մյուս միջերջները պետք է գրել միասին վորպես «ալ» միջերջներ:

Այն միջերջները, վորոնց նկատմամբ տնտեսությունը լրիվ կատարել է կոնտրակտացիայի պայմանագիրը կամ պլանային առաջադրությունը ցուցակում չպետք է գրել և նրանց մնացորդը մասնավոր շուկայում վաճառվելուց ստացած չեկամուտը չպետք է պարզել, վորովհետև հարկի չենթակա չեն:

§ 62. ձև № «բ» ցուցակը պետք է լրացնել հետևյալ կարգով՝

ա) Ցուցակի վերնագրում պետք է գրել գյուղի և շրջանի անունները.

բ) 1-ին սյունյակում պետք է գրել №№ ըստ կարգի.

գ) 2-րդ սյունյակում պետք է գրել տնտեսություն № ըստ գյուղացուցակի:

դ) 3-րդ սյունյակում պետք է գրել տնտեսատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը.

ե) 4-րդ սյունյակում պետք է գրել այն միջերջների անունները, վորոնք վաճառված են մասնավոր շուկայում բարձր գներով այն ձևով, վորը սահմանված է այս հրահանգի 61-րդ §-ով.

զ) 5-րդ սյունյակում պետք է գրել տեղեկություններ այն մասին, քե օվյալ մրեբների վերաբերյալ կնքած է յեղել արդյոք կոնտրակտացիայի պայմանագիր թե վոչ, կամ յեղել է արդյոք պլանային միջերման կայուն առաջադրություն թե վոչ: Այդ տեղեկությունները համապատասխանորեն պետք է նշակել «այո» կամ «վոչ» բառերով: Այսինքն՝ յեթե պայմանագիր կամ կայուն առաջադրություն կամ ինքնա-

պարտավորություն յեղել է, ապա պետք է նշանակել «այո» յեթե չի յեղել, ապա պետք է նշանակել «վոչ»:

ը) 6-րդ սյունյակում պետք է գրել տեղեկություններ այն մասին՝ կատարել է արդյոք տնտեսությունը իր պարտականությունը թե վոչ: Տեղեկությունները համապատասխանորեն պետք է նշանակել «այո» կամ «վոչ».

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Յեթե տնտեսությունը կատարել է կոնտրակտացիայի պայմանագիրը կամ պլանային միջերման առաջադրությունը միայն մի մասով, այսինքն վոչ լրիվ— դա հավասար է, վոր չի կատարել և նման դեպքերում պետք է գրել «վոչ»:

թ) 7-րդ սյունյակում պետք է գրել տեղեկությունները թե ավյալ միջերջից վորքան է վաճառել տնտեսությունը:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Միջերջների քանակը պետք է ցույց տալ փթեթով, կիլոներով, կամ ալ չափերով:

ժ) 8-րդ սյունյակում պետք է գրել այն ամբողջ գումարը, վորը ստացել է տնտեսությունը ավյալ միջերջը վաճառելուց: Որինակ. յենթադրենք վաճառել է 10 փ. ցորեն-փութը 15 ո. և ստացել է 150 ո.: 8-րդ սյունյակում պետք է գրել այդ 150 ո. գումարը:

ի) 9-րդ սյունյակում պետք է գրել այն գումարը, վոր մուտ է մասնավոր շուկայում վաճառվելուց ստացած ամբողջ գումարից, պլանային միջերման գներով հաշված նույն միջերջի արժեքը դուրս գալուց հետո: Որինակ յենթադրենք 10 փ. ցորենը վաճառելուց ստացել է ընդամենը 150 ո., իսկ պլանային միջերման գներ-

բով այլ 10 փութ ցորենի արժեքը կազմում է ասենք
թե—20 ու: Ուրեմն 150 ու. դուրս գալով 20 ու. կմնա
130 ու., վորը նշանակվում է 9-րդ սյունյակում:

1) 10-րդ սյունյակում պետք է գրել անտեսու-
թյան ընդհանուր կարգով հաշված ամբողջ հարկվող
յեկամտի գումարը: Տեստեսության ընդհանուր հարկվող
յեկամտի մեջ պետք է հաշվել նաև վոչ-գյուղատնտե-
սական գրադմունքներից ստացած հարկվող յեկամտի
գումարը:

բ) 11-րդ սյունյակում պետք է գրել անտեսու-
թյան գյուղատնտեսական մթերքները բարձր գներով
վաճառելուց ստացած յեկամտի այն գումարը, վորը
հաստատվում է շրջանային հարկային հանձնաժողովի
կողմից:

ձ) 12-րդ սյունյակում պետք է գրել բարձր գնե-
րով մթերքները վաճառելուց ստացած յեկամտի գու-
մարի այն մասը, վորը յենթակա յե հարկի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վորովհետև մասնավոր շուկայում
գյուղատնտեսական մթերքները վաճառվելուց
ստացած յեկամտները մտցվում են հարկվող յե-
կամտի մեջ, անտեսության մյուս հարկվող յե-
կամտների 50 տոկոսից վոչ ավելի չափով, ուս-
տի 12-րդ սյունյակում նշանակվող գումարը վոչ
մե րեպքում 10-րդ սյունյակում նշանակված գու-
մարի 50 տոկոսից ավելի չի կարող լինել: Որի-
նակ՝ անտեսության ընդհանուր հարկվող յեկա-
մուտը 500 ու. է (400 ու. գյուղատնտեսության
նից և 100 ու. վոչ գյուղատնտեսական գրադմունք-
ներից): Նա ստացել է կայուն առաջադրություն
50 փ. հաց, 1 վոչխար 50 փ. կարտոֆիլ հանձնե-

լու վերաբերյալ: Հանձնել է հաց 30 փ. և կար-
տոֆիլ 50 փ.: 1930 թվի ոգոստոսից սկսած մինչ
1931 թ. մայիս ամիսը այդ տնտեսությունը մաս-
նավոր շուկայում վաճառել է հաց, վոչխարի միս,
մեղր, թռչուն, կաթ և յուղ: Մասնավոր շուկայի
և պլանային մթերման գների տարբերության
շնորհիվ նա ստացել է յեկամուտ հացից 150 ու.,
վոչխարի մսից 50 ու., մեղրից 50 ու., կաթից և յու-
ղից 75 ու. թռչուններից 25 ու. այսինքն ընդա-
մենը 350 ու.

Բայց վորովհետև անտեսության ընդհանուր
հարկվող յեկամուտը կազմում է 500 ու., ապա
ավելի անտեսության մասնավոր շուկայում մը-
թերքների վաճառելուց ստացած յեկամտի հարկ-
վող գումարը պետք է լինի 250 ու., այլ վոչ թե
350 ու.: Այսպիսով այս տնտեսության վերաբեր-
յալ 10-րդ սյունյակում պետք է գրվի 500 ու.
իսկ 12-րդ սյունյակում միայն 250 ու., չնայած
վոր 9-րդ սյունյակում գրված է 350 ու.:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—10, 11 և 12-րդ սյունյակները
հաշվառման ժամանակ չեն լրացվում: Այդ սյուն-
յակները լրացվում են հետագայում շրջագործկանում:

կ) 13-րդ սյունյակում պետք է գրել գանազան
լրացուցիչ տեղեկություններ անտեսության վերաբեր-
յալ:

§ 63. Մասնավոր շուկայում բարձր գներով գյու-
ղատնտեսական մթերքների վաճառելուց յեկամտներ
ստացած անտեսությունների ցուցակը կազմելու և այդ
յեկամտների գումարները վորոշելու ամբողջ աշխա-
տանքներին, գյուղխորհուրդները և գյուղհարկային

հանձնաժողովները անդաման պետք և մասնակից ա-
նեն գյուղի լայն հասարակայնությանը՝ չքավորներին,
բազմազաններին, կոլտնտեսականներին և ակտիվ մի-
ջակներին:

§. 64. Գյուղհարկային հանձնաժողովների կող-
մից վերոհիշյալ կարգով կազմված ցուցակը այն տըն-
տեսություններին, վորոնք մասնավոր շուկայում գյու-
ղատնտեսական միջերժներ վաճառելուց 75 ուրբուց
ավելի հարկի չենթակա յեկամուտներ են ստացել, ան-
պայման պետք և քննության, առնվի չքավորության,
կոլտնտեսականների և ակտիվ միջակներին ժողովում և
ապա ներկայացվի շրջանային հարկային հանձնաժո-
ղովին: Շրջանային հանձնաժողովը տնտեսությունն առ
տնտեսություն քննելով և ստուգելով ամբողջ ցուցա-
կը և անհրաժեշտության դեպքում փոփոխելով գյուղ-
հարկհանձնաժողովի վորոշած գումարները, վերջնա-
կանապես հաստատում և այդ և հանձնում շրջֆին-
բաժնին:

§ 65. 104 և 105-րդ սլուեյակները հաշվառման
ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

§ 66. 106-րդ սլուեյակում պետք և գրել վոչ գյու-
ղատնտեսական յեկամտի աղբյուրի անունը:

§ 67. 107, 108, 109, 110 և 111-րդ սլուեյակնե-
րը հաշվառման ժամանակ չեն լրացվում և չեն գծվում:

§ 68. 112—113-րդ սլուեյակներում պետք և գրել
նույն սլուեյակների վերնադրերի համաձայն տնտեսու-
թյան բոլոր շնչերի թիվը:

1. Տնտեսության շնչերի թիվ մեջ պետք և մըա-
նեն՝

ա) Տնտեսության մեջ մշտապես ապրող ընտա-

նիքի բոլոր անդամները, ինչպես և տնտեսությունից
դուրս ապրող անդամները, վորոնք ունեն հողաբաժին:

Յեթե տնտեսությունից դուրս ապրող ընտանի-
քի անդամը ունի իր ընտանիքը, ապա տնտեսության
շնչերի թիվ մեջ պետք և հաշվել այդ ընտանիքի միայն
այն անդամներին, վորոնք ունեն հողաբաժին:

բ) Հող չստացողներից շնչերի ընդհանուր թիվի
մեջ պետք և հաշվել նոր ծնվածներին և նրանց, վո-
րոնք մտել են ընտանիքների մեջ հողաբաժանությունից
հետո ընտանեկան՝ նոր կապակցություն շնորհիվ (ա-
մուսնություն, անփեսա և այլն), յեթե նրանք շարու-
նակ ապրում են տնտեսության մեջ:

դ) Տնտեսության մեջ մշտապես չբնակվող ընտա-
տանիքի անդամներից շնչերի ընդհանուր թիվում պետք
ե հաշվել առնել նաև Բ. Գ. Կարմիր բանակում գտնվող
ղինվորականներին, (նույն թիվում Մ. Պ. Ք. Վ. գորա-
մասերում և ուղեկցող պահակախմբերում գտնվող զին-
վորականներին), ռազմականացված պահպանություն-
ներում (նույն թիվում նաև ռազմականացված հրդեհա-
յին պահպանություններում) Յ) միլիցիայում և քրե-
յական հետախուզության մեջ ծառայող անձանց, ինչ-
պես նաև բոլոր ուսանողներին և աշակերտներին:

դ) Այն վայրերում, վորտեղ հողաբաժանությունը
ղեռ չի կատարված և գյուղացիները կամ հողաբաժին
չունեն, կամ հողաբաժինը ստացված և առանց հաշվի
ստանելու տնտեսության շնչերի թիվը, տնտեսությունից
դուրս ապրող ընտանիքի անդամներին պետք և հաշ-
վել շնչերի թիվում միայն այն դեպքում, յերբ նրանք
չեն կտրել կապը գյուղական տնտեսությունից և իրենց
վաստակների վորոշ մասը հատկացնում են տնտեսու-

թիւանը կամ ինքն-ոժանդակութիւնն ստանում տնտեսութեանից:

2) տնտեսութեան շնչերի թվի մեջ Հպետք ե մտնեն՝

ա) Նոր ընտանեկան կապակցութեամբ (ամուսնութեան) ուրիշ տնտեսութեաններ զնացած անձիք, մեռածները և անհայտ կորածները, չեթե նույնիսկ մնացած լինեն նրանց հոգաբարձիները:

բ) Տնտեսութեան վարձու բանվորները:

գ) Մեկ տարուց ավելի խոլատաղբեման դատուպարտվածները:

112—118-րդ սլունյակները պետք է լրացվեն հետևյալ կարգով՝

112-րդ սլունյակում պետք է գրել աշխատունակ տղամարդկանց 16 տարեկանից վեր մինչև 60 տարեկան հասակում:

113-րդ սլունյակում պետք է գրել աշխատունակ կանանց 16 տարեկանից վեր մինչև 60 տարեկան հասակում:

114-րդ սլունյակում պետք է գրել 14 տարեկանից մինչև 16 տարեկան անչափահաս տղաներին:

115-րդ սլունյակում պետք է գրել 14 տար. մինչև 16 տարեկան անչափահաս աղջիկներին:

116-րդ սլունյակում պետք է գրել մնացած ընտանիքի անդամներին, այսինքն մինչև 14 տարեկան և 60 տարեկանից բարձր հասակ ունեցողներին:

117-րդ սլունյակում պետք է գրել բացակայող ընտանիքների անդամներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ընտանիքի բացակա անդամներ համարվում բոլոր աշն անձինք, վորոնք անընդհատ

3 ամսից ավելի հեռացվել են տնտեսութեանից, հաշվելով նույն թվում նաև կարմիր բանակի զինվորականներին ու նրանց հավասարեցրած անձանց, ինչպես նաև 3 ամսից ավելի մինչև 1 տարի ժամանակով ազատազրկման դատապարտվածներին, ուսանողներին, աշակերտներին և այլն:


Ընտանիքի բացակա անդամներ չեն համարվում այն անձինք, վորոնք մինչև 3 ամիս ժամանակով հեռացել են տնտեսութեանից դուրստնտեսական աշխատանքներում, դրսի շինարարական և արհեստային աշխատանքներում աշխատելու հետեվանքով և այլն:

118-րդ սլունյակում պետք է գրել ընդամեն շնչերի թիվը, այսինքն 112, 113, 114, 115, 116 և 117-րդ սլունյակների գումարը:

3. ԿՈՒՂԵԿՏԻՎ ՅԵՎ ԱՅՍ ԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ԳԱՐՏԵՐԻ ԼՐԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

§ 69. Կողեկտիվ տնտեսութեանների (դուրստնտեսական կոմունա, արտել, միատեղ հող մշակող ընկերութեանների) խորհանտեսութեանների, մեքենատրակտորային կայանների և զանազան կազմակերպութեանների հաշվառումը կատարվում է առանձին քարտով, վորի համար կտրվի լրացուցիչ ցուցումներ:

Հարկման սեկտոր



ՀՀ Ազգային գրադարան



313

2-94